ՀՀԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻԱԶԳԱՅԻՆԱԿԱԴԵՄԻԱ
ՌԱԴԻՈՖԻԶԻԿԱՅԻԵՎԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻՆՍՏԻՏՈՒՏ

Պողոսյան Տիգրան Նուբարի

ՀԱՃԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԲՀ ԵՎ ՏԵՐԱՀԵՐՑԱՅԻՆ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱԶՄԱՄՈԴ ԵՐԿԿԱՊ ԷԼԵԿՏՐԱԴԻՆԱՄԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Ատենախոսություն

Ա.04.03-Ռադիոֆիզիկա մասնագիտությամբ
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝
Ֆիզ.-մաթ. գիտ. թեկնածու Ա.Ա. Հախումյան

Երևան 2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի արդիականությունը

Ներկայումս արդիական խնդիր է Էլեկտրամագնիսականսպեկտրի գերբարձր հաճախային (ԳԲՀ) և տերահերցային (ՏՀց)տիրույթներում մեծ արդյունավետությամբ ալիքատարային հանգույցների մշակումը և կիրառումը: Վերջին երկու տասնամյակների ընթացքում հաճախային տիրույթը, որը հայտնի է որպես ՏՀց-ային տիրույթ՝ ընկած էլեկտրամագնիսական սպեկտրի միլիմետրական և ինֆրակարմիր տիրույթների միջև (100ԳՀց-ից մինչև 10ՏՀց), ցուցաբերում է զգալի հետաքրքրություն՝ շնորհիվ էլեկտրական և օպտիկական մեթոդների (գեներացում, ուղղորդում և դետեկտում) զարգացման [1-5], որոնք ապահովում են ավելի հեշտ մուտք այդ հաճախությունների տիրույթ: ՏՀց-ային ճառագայթման կիրառման հիմնական ոլորտներն են սպեկտրոսկոպիան [6-24], պատկերումը (imaging) [25-31], հեռամխում (remote sensing) [25, 32] և գերարագ կապի համակարգե [33-36]: ՏՀց-ային ճառագայթումը հանդիսանում է ոչ իոնացնող ենթամիլիմետրական միկրոալիքային ճառագայթում և, ինչպես միկրոալիքները, ունակ է թափանցելու բազմատեսակ ոչ հաղորդիչ նյութերի մեջ: Բազմաթիվ պինդ, հեղուկ և գազային նյութեր ցուցաբերում են եզակի սպեկտրոսկոպիական հատկություններ ՏՀց-ային հաճախություններում [6-12]: Վերջերս ՏՀց-ը օգտագործվում է բարորակ և չարորակ ուռուցքները տարբերակելու համար [13-15]: Բազմաթիվ պայթուցիկ նյութեր և ապօրինի թմրանյութեր ցուցաբերում են եզակի սպեկտրալ հատկություններ այդ տիրույթում [16, 17]: Կապի համակարգերում ՏՀց-ային հաճախությունների կիրառումը գրավիչ է այն փաստով, որ հնարավոր է ինֆորմացիայի գերարագ փոխանակում և այն, որ այս տիրույթը հասանելի է (ներկայումս 300ԳՀց-ից բարձր տիրույթը ազատ է): ՏՀց-ային տիրույթի զարգացմանը զուգընթաց մեծացավ լայնաշերտ, թույլ դիսպերսիայով և անկորուստ ալիքատարների պահանջը: Ելնելով այն փաստից, որ ՏՀց-ային տիրույթում մոտեցումները իրենցից ներկայացնում են ԳԲՀ և օպտիկական հաճախությունների խառնուրդ, ալիքատարային կառուցվածքների հետազոտությունը հիմնվում է այդ տիրույթներում երկարամյա տեսական և փորձնական հետազոտությունների վրա: Արդյունավետ ալիքատարների բացակայությունը էական խոչընդոտ է հանդիսանում կիրառական ՏՀց-

այինսարքավորումների զարգացման համար: Ընդհանուր առմամբ, ՏՀց-ային տիրույթում իդեալական ալիքատարային կառուցվածքի բազմաթիվ որոնումները բերել են տարատեսակ ալիքատարների հետազոտմանը և կիրառմանը [37-65]: Հարկ է նշել, որ երկկապ կառուցվածքով ալիքատարները մինչ այժմ ցուցադրել են ամենալավ կոմբինացիաները ընդհանուր տարածման հատկությունների ՏՀց-ային ալիքների ուղղորդման (guiding) համար՝ ներառելով ցածր կորուստներ, մոդային դիսպերսիայի բացակայություն և բարձր միակցում (coupling) ազատ տարածության հետ: Համեմատելով գոյություն ունեցող ՏՀց-ային ալիքատարային համակարգերի բնութագրերը՝ հանգում ենք այն եզրակացության, որ ցածր դիֆրակցիոն կորուստներով և թույլ դիսպերսիայով ալիքատարի մշակումը, անշուշտ, արդիական խնդիր է:

ԳԲՀ տիրույթի՝ մեծ հզորության ուժեղարարները (ՄՀՈՒ), որոնք հիմնված չեն վազող ալիքի լամպերի վրա (ՎԱԼ),վերջերս մեծ պահանջարկ ունեն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ռադարային համակարգերը, լիցքավորված մասնիկների արագացուցիչները: ՄՀՈՒ-ի այլընտրանքային տարբերակը,որը հիմնված չէ ՎԱԼ-ի վրա, դա հզորության գումարիչ-բաժանիչն (ՀԳԲ) է[66-81]: ՀԳԲ-ի տեխնիկան լայնորեն օգտագործվում է կիսահաղորդչային ուժեղարարների ելքային հզորության մակարդակի բարելավման համար: ՀԳԲ-ը,գումարելով համապատասխան քանակի համեմատաբար թույլ հզորության ուժեղարարների ելքային հզորությունները,արդյունքում ապահովում է գումարային մեծ հզորություն: Այսպիսով՝ ՄՀՈՒ-ի բնութագրերը կախված են ՀԳԲ-ից: Ահա թե ինչու է բարձր բարորակությամբ ՀԳԲ-ի նախագծումը և մշակումըայդքան կարևոր: Ինչպես գիտենք, հիմնականում օգտագործվող ծառանման կառուցվածքները, հիմնված լինելով քառակուսային կամ վիլկինսոնային ՀԳԲ-ների վրա, ունեն բավականին պարզ մշակում, սակայն նրանք ունեն մի բացասական կողմ. այն է՝ մեծ քանակով հաղորդման գծերի օգտագործումը բերում է հավելյալ կորուստների, որոնքաճում են բաժանման ճյուղերի քանակի մեծացման հետ: ՀԳԲ-ների երկկապ ռադիալ կառուցվածքը, ելնելով սիմետրիայից, ապահովում է ցածր կորուստներ և ճյուղերիմիջև բարձր կապազերծում:ՀԳԲ-ները լայնորեն կիրառվում են որպես ցանցային անտենաների բաշխիչ հանգույցներ[82, 83]: Համեմատելով գոյություն ունեցող ԳԲՀ ՀԳԲ-ները՝ ՄՀՈՒ-ում և ցանցային անտենաներում կիրառելու համար հանգում ենք

այն եզրակացության, որ ցածր կորուստներով և համեմատաբար փոքր ֆիզիկական չափերով ՀԳԲ-ի մշակումը, անշուշտ, արդիական խնդիր է:

Վերջին տարիներին անտենաների բազմահաճախային և բազմաբևեռացմամբճառագայթիչները(ԲԲՃ)[84-102] (многочастотный и многопляризационный облучатель, dual-bandand polarization feedhorn) լայն կիրառում ունեն արբանյակային համակարգերում, ռադիոմետրներում, ռադիոլոկացիայում: ԲԲՃ-ները թույլ են տալիս տարբեր հաճախություններով և բևեռացմամբ ազդանշանների միաժամանակյա ընդունում: Այդպիսի ճառագայթիչների հիմքում ընկած է երկկապ կոաքսիալ ալիքատարային ճառագայթիչը: ԲԲՃ-ի հիմնական խնդիրը դա կոաքսիալ ալիքատարի վոչ հիմնական մոդի գրգռումն է և սնող մուտքըրի միմյանց նկատմամբ կապազերծումը: Համեմատելով գոյություն ունեցող ԳԲՀ ԲԲՃ-ների բնութագրերը ռադիոմետրիայում ոգտագործման համար՝ հանգում ենք այն եզրակացության, որ բարձր կապազերծմամբ ԲԲՃ-ի մշակումը իրոք արդիական խնդիր է:Թե՛ ՏՀց-ային և թե՛ ԳԲՀ տիրույթների նշված խնդիրները կարող են լուծվել բազմակապ ոչ դիսպերսիվ էլեկտրադինամիկական կառուցվածքների կիրառմամբ, ինչն էլ հավաստիացնում է ատենախոսության արդիականությունը:

Ատենախոսության նպատակը

Հետազոտել, մշակել և կիրառել ԳԲՀ և ՏՀց-ային տիրույթների երկկապ արդյունավետ կառուցվածքներ, որոնք կապահովեն լայնաշերտություն, ցածր կորուստներ և թույլ մոդային դիսպերսիա: Ատենախոսության նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

1. տեսականորեն, թվային մեթոդներով և փորձնականորեն հետազոտել ՏՀց-ային տիրույթի երկկապ գոգավոր զուգահեռ թիթեղներով ալիքատարի (ԳԶԹԱ) մոդային բաղադրությունը, դիսպերսիվ և էներգետիկ հատկությունները
2. հետազոտել ԳԶԹԱ-ում թույլ դիսպերսիայով և փոքր դիֆրակցիոն կորուստներով ՏՀց-ային իմպուլսների տարածման հնարավորության պայմանները
3. ուսումնասիրել ԳԶԹԱ-ի կայունությունը մեխանիկական դեֆորմացիաների առկայության պայմաններում

4. ԳԲՀ տիրույթի ՄՀՈՒ-ում կիրառման նպատակով մշակելերկկապկառուցվածքով, բազմաճյուղանի, փոքր չափերով և ցածր կորուստներով ՀԳԲ
5. ԳԲՀ տիրույթիհեռամխման համակարգերում կիրառման նպատակովմշակելերկկապկառուցվածքով,երկհաճախային և բազմաբևեռացմամբ ճառագայթիչ (ԵԲՃ):

Գիտականնորույթը

1. ԳՋԹԱ-ումTE մոդերի տարածման համար ադիաբատիկ մոտարկմամբ ստացվել են դիսպերսիոն հավասարումները և նրանց լուծումները: Ցույց է տրվել, որ TE_{01} մոդը խիստ կենտրոնացվում է ալիքատարի առանցքի մոտակայքում:
2. Առաջին անգամ թվային մեթոդներով և փորձնականորեն ուսումնասիրվել է ԳՋԹԱ-ում քվազի-TEM մոդի տարածման առանձնահատկությունները: Ցույց է տրվել, որ TEM և TM մոդերի վերադրմամբ առաջացած քվազի-TEM մոդը օժտված է ցածր դիֆրալցիոն կորուստներով, թույլ դիսպերսիայով, էներգիայի խտացմամբ և ապահովում է աղավաղումներից զուրկ լայնաշերտ ՏՀց-ային իմպուլսների տարածում:
3. Քվազի-TEM մոդի գրգռման համար առաջարկվել է եղանակ, որը ապահովում է արդյունավետ և պարզ միակցում ընկնող ՏՀց-ային Գաուսյան փնջի հետ:
4. Երկկապ կոաքսիալ կառուցվածքի հիման վրա մշակվել է նոր ռեակտիվ տիպի ռադիալ բազմաճյուղանի ՀԳԲ՝ օժտված փոքր չափերով և գերցածր կորուստներով: ՀԳԲ-ի համաձայնեցման հանգույցը մշակվել է ոչ դասական եղանակով:
5. Մշակված է կոաքսիալ և կլոր ալիքատարների համառանցք համատեղությամբ ԳԲՀ ԵԲՃ:

Կիրառականարժեքը

1. Առաջարկված ԳՋԹԱ-ի քվազի-TEM մոդի եղանակը: Մշակված ալիքատարը, ի շնորհիվ թույլ դիսպերսիայի, դիֆրակցիոն կորուստների և էներգետիկ հատկության, լայնորեն կարող է կիրառվել ՏՀց-ային սպեկտրոսկոպիայում և գերարագ կապի համակարգերում:

2. Մշակված ՀԳԲ-ը, շնորհիվ լայնաշերտության և ֆիզիկական փոքր չափերի, լայնորեն կարող է կիրառվել ՄՀՈՒ-ում և ցանցային անտենաների բաշխիչ հանգույցներում:
3. ՄշակվածԵԲՃ-ն,շնորհիվ բազմաֆունկցիոնալության, լայնորեն կարող է կիրառվելհեռամխման համակարգերում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները

1. ՏՀց-ային տիրույթի սահմանափակ լայնությամբ ԳԶԹԱ-ում TE, TMև TEM մոդերի տարածման ուսումնասիրման արդյունքները:
    - Սահմանափակ լայնությամբ ԳԶԹԱ-ումառանց դիֆրակցիոն կորուստների կարող է տարածվել միայն TE_{01}մոդը:
    - Առանց դիֆրակցիոն կորուստներով և թույլ դիսպերսիայով կարող է տարածվել նաև քվազի-TEM մոդը, որը ներկայացվում է TEMև TM_1 մոդերի վերադրմամբ:
    - Քվազի-TEM մոդը կարելի է գրգռել ընկնող ՏՀց-ային Գաուսյան փնջի ալիքային վեկտորի և ալիքատարի երկայնական առանցքի միջև՝որոշակի անկյուն կազմելով:
2. ԳԶԹԱ-ն օժտված է մի շարք առավելություններով՝ ի տարբերություն հարթ զուգահեռ թիթեղներով ալիքատարի (ՀԶԹԱ):
    - ԳԶԹԱ-ում TE_{01}և քվազի-TEM մոդերը ունեն ընդգծված էներգիայի կենտրոնացում:
    - ԳԶԹԱ-ը կայուն է մեխանիկական դեֆորմացիաների նկատմամբ:
3. ԳԲՀ տիրույթի բազմաֆունկցիոնալությամբ, գերլայնաշերտությամբ և բազմահաճախությամբ օժտված սարքերը հնարավոր է իրականացնել միայն բազմակապ ոչ դիսպերսիվ էլեկտրադինամիկական կառուցվածքներով:
    - Լայնաշերտ, փոքրաչափ համաձայնեցնող հանգույցները իրականացնելի են ոչ մոնոտոն բնույթի փոփոխվող ալիքային դիմադրություններով շղթաների միջոցով
    - Կոաքսիալ և կլոր ալիքատարների համառանցք համատեղությամբ հնարավոր է կառուցել ԲԲՃ-ներ ապերտուրային ալեհավաքների համար:

Աշխատանքի ներկայացումը

Ատենախոսության հիմնական արդյունքները զեկուցվել են «conference on Lasers and Electro-Optics (CLEO) - 2009» (Baltimore), «conference on Modern Problems in Optics and Photonics-2009 - 2010» (Երևան), «International Conference "The Technique of Microwave and THz Waves and its Application in Biomedical and Radar Technologies and in Remote Sensing" (IRPhE'2010)» (Aghveran) միջազգային գիտաժողովներում, ինչպես նաև ԵՊՀգերբարձր հաճախությունների ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի ևՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և Էլեկտրոնիկայի ինստիտուտի սեմինարներում:

Հրապարակումները

Ատենախոսությանհիմնականարդյունքներըտպագրվելեն 8 գիտականաշխատանքներում [51, 58, 60, 78, 84, 86-88]:

Ատենախոսությանկառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից և 108 անուն պարունակող գրականության ցանկից: Աշխատանքում առկա են 52 նկարներ: Աշխատանքի ընդհանուր ծավալը 104 էջ է:

ԳԼՈՒԽ 1
ՏՀՑ-ԱՅԻՆ ՏԻՐՈՒՅԹԻ ԵՐԿԿԱՊ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Տհց-ային տիրույթիէլեկտրամագնիսական ալիքների գեներացման, ուղղորդման և դետեկտման մոտեցումները իրենց մեջ ներառում է ԳԲՀ և օպտիկական տիրույթների խառնուրդներ, բայց այս տիրույթում լուրջ խնդիրներ են առաջանում գերկարճՏհց-ային իմպուլսների ուղղորդման ժամանակ: Այս գլխում նախ դիտարկված են Տհց-այինտիրույթի ուղղորդման հիմնականէլեկտրադինամիկական կառուցվածքները և նրանց վարքը գերկարճՏհց-ային իմպուլսների ուղղորդման ժամանակ,ապա հետազոտված է երկկապ կառուցվացքներով հարթ և գոգավոր թիթեղներով ալիքատարները:

1.1. Տհց-ային տիրույթի ալիքատարները և նրանց կիրառումը

Գրեթեհարյուրտարիէ, ինչէլեկտրամագնիսականալիքներիտարածմանհամարօգտագործվումենալիքատարները: Այսօրալիքատարներըծառայումենէլեկտրամագնիսականսպեկտրիամբողջտիրույթում՝ սկիզբառնելովգերբարձրհաճախությունների (ԳԲՀ) տիրույթումլավհայտնիամուր, մետաղյաուղղանկյունալիքատարներիցմինչևօպտիկականհաճախություններումվայնորենկիրառվողճկունդիէլեկտրիկմանրաթելերը: Սկիզբ առնելով 90-ական թվականներից մեծ ուշադրության արժանացած Տհց-ային ժամանակային-տիրույթիսպեկտրոսկոպիան (Տհց-ԺՏՍ, THz-TDS)[8-12] ալիքատարների կիրառման լուրջ խնդիրներ է առաջադրել:Տհց-ԺՏՍ հիմնական առավելություններից մեկը այն է վոր հետազոտվող նյութերի հատկությունների ինֆորմացիան հաճախությունների բավականին լայն (100ԳՀց-ից մինչև 10Տհց) շերտում ստացվում է ակնթարթորեն:Տհց-ԺՏՍ-ի հիմքում ընկած է այն որ գեներացված պիկո-վայրկյանային իմպուլսները (նկ.1.1.1) փոխազդելով հետազոտվող նյութի հետ կրում են փոփոխություն պարունակելով հետազոտվող նյութի սպեկտրալ ինֆորմացիա: Այսպիսով ակնհայտ է որ Տհց-ԺՏՍ-ում կիրառվող ալիքատարները պետք է որքան հնարավոր է չաղավաղեն այդ իմպուլսները:Աղավաղումները առաջանում են ալիքների տարածման միջավայրի

խմբային արագության դիսպերսիայի հետևանքով:ՏՀց-այինչնչին աղավաղումներով իմպուլսներիտարածման ամենից լավհամակարգերըորոնցով ուղղորդվում և մանիպուլացվում են ՏՀց-ային ճարագայթները



Նկ. 1.1.1ՏՀց-այինիմպուլսը (a) և նրա սպեկտրը(b):



Նկ. 1.1.2ՏՀց-ԺՏՍ-ի կոնֆոկալ համակարգ:

հիմնված են ազատ տարածության (ոչդիսպերսիվ) օպտիկայի վրա ներառելով հեմիսֆերիկ ոսպնյակներ և կոնֆոկալ համակարգեր (նկ.1.1.2): Սակայն այսպիսի

համակարգերն խոշոր են իրենց չափերով, դժվար օգտագործման մեջ և պահանջում են օգտվողներից օպտիկաֆիզիկական հավասարեցման տեխնիկայի փորձառություն:

Այսպիսով արդյունավետ ՏՀց-ային ալիքատարը պետք է ցուցաբերի ցածր կորուստներ և ցածր դիսպերսիա: Հիմնական դժվարությունը մինչ այժմ ել կայանում է ՏՀց-ային տիրույթում ալիքների ուղղորդված տարածման համար պիտանի նյութերի բացակայությունը: Լավագույն համապատասխան նյութերը, որոնք թափանցիկ և համեմատաբար ոչ դիսպերսիվ են ՏՀց-ային տիրույթում դրանք բյուրեղներն են, որոնք դժվար են գործնական օգտագործման մեջ: Նյութերը, ինչպիսիք են ապակիները և պոլիմերները, որոնք լավ են աշխատում օպտիկական հաճախականություններում, ցուցադրում են անընդունելի բարձր ցրման կորուստներ ՏՀց-ային տիրույթում:ԳԲՀ և ոպտիկական տիրույթներում լայնորեն կիրառվող ալիքատարներից ոչ բոլորնեն բավարարում գերկարճ իմպուլսների տարածման պայմաններին օրինակ[37, 38] աշխատանքներում հետազոտվել ենՏՀց-ային իմպուլսների (0.67-ից 3.5 ՏՀց) ցածր կորուստներով և ուժեղ դիսպերսիայով տարածումը (նկ.1.1.3) կլոր(c, d) և ուղղանկյուն (e, f) դատարկ միջուկով մետաղական ալիքատարներով:Կիրառելով քվազիօպտիկական մոտեցում արդյունավետ միակցում է ապահովվել ազատ տարածվող ՏՀց-ային իմպուլսների և ալիքատարների միջև: Ցույց է տրված որ գծային բևեռացված ընկնող ՏՀց-ային իմպուլսներըմիակցվում են միայն TE_{11}, TE_{12}ևTM_{11}մոդերով կլոր ալիքատարում և TE_{10}և TM_{12}մոդերով ուղղանկյուն ալիքատարում:Իմպուլսների տարածումը բացատրված է որպես գծային վերադրում միակցված մոդերի յուրաքանչյուրը յուրովի կոմպլեքս ալիքային վեկտորով:Հենակային (reference) իմպուլսը (a, b) ալիքատարներում տարածվելովդիսպերսիայի հետեվանքով սփռվում է ժամանակային առանցքիդրական ուղղությամբ (a, կլոր ալիքատարում 2պվ-ից 70պվ) և (b, ուղղանկյուն ալիքատարում 1պվ-ից 25պվ): ՏՀց-ային իմպուլսների տարածումը շափյուղե (sapphire) բյուրեղից մանրաթելում հետազոտվել է [49] աշխատանքում(նկ.1.1.4): Տեսության և պորձի միջև լավ համաձայնեցում է ստացվել ընդունելով հետազոտելով տարածումը HE_{11}մոդով: Էտալոնային իմպուլսը (կարմիր գույն) ալիքատարում տարածվելով դիսպերսիայի հետեվանքով սփռվում է ժամանակային առանցքիդրական ուղղությամբ (1պվ-ից 15պվ):[50] աշխատանքում

հետազոտվել է ՏՀց-ային իմպուլսների տարածումը մեծ խտությամբ դիէլեկտրիկ (polythene) շերտում (նկ.1.1.5): Էտալոնային իմպուլսը (կարմիր գույն) ալիքատարում



Նկ. 1.1.3ՏՀց-այինիմպուլսի ժամանակային (a, c և e)և սպեկտրալ (b, d և f) պատկերներըտարածվելով(a, b) ազատ տարածությամբ (c, d) կլոր և (e, f) ուղղանկյուն ալիքատարներում:



Նկ. 1.1.4ՏՀց-ային իմպուլսի ժամանակային (a) և սպեկտրալ (b) պատկերները տարածվելով դիէլեկտրիկ մանրաթելում: Կարմիր գույնով հենակային իմպուլսի պատկերները:



Նկ. 1.1.5ՏՀց-ային իմպուլսի տարածման ժամանակային (c) և սպեկտրալ (d) պատկերները դիէլեկտրիկ շերտում: Կարմիր գույնով հենակային իմպուլսի պատկերները:

տարածվելով դիսպերսիայի հետեվանքով սփռվում է ժամանակային առանցքիբացասական ուղղությամբ (1պվ-ից 15պվ): Վերջին տարիներին մեծ հետաքրքրություն են ներկայացնում ֆոտոնիկ բյուրեղյա մանրաթելերը [52]: Այս ալիքատարները համեմատած տիպիկ օպտիկական մանրաթելերի հետ ցուցաբերում են լայնաշերտ միա-մոդ տարածում և համեմատաբար թույլ դիսպերսիա (նկ.1.1.6): Էտալոնային իմպուլսը ալիքատարներում տարածվելով սփռվում է ժամանակային առանցքիդրական ուղղությամբ 1պվ-ից 35պվ:



Նկ. 1.1.6ՏՀց-ային իմպուլսի տարածման ժամանակային (ձախ) և սպեկտրալ (աջ) պատկերները ֆոտոնիկ (վերը) բյուրեղյա մանրաթելում:

ՏՀց-ային իմպուլսների առանց աղավաղումների տարածում դիտվում են կոաքսիալ ալիքատարում TEM մոդով[51], մետաղական լարից բաղկացած ալիքատարումԶոմերֆիլդի մոդով [58, 59], երկու գլանային մակերևույթներով կազմած ալիքատարումTEM մոդով[61], ՀԶԹԱ-ումTEMմոդով [62-65] և ԳԶԹԱ-ումTEM մոդում [67, 68]:Չնայած բոլոր այս ալիքատարները ունեն իրենց առավելությունները, ՀԶԹԱ-ի և ԳԶԹԱ-ի լայնական Էլեկտրամագնիսական TEM մոդըառ այսօր ցուցադրել է ամենալավ կոմբինացիան ընդհանուր տարածման հատկությունների պիկո-վայրկյանային իմպուլսների ուղղորդմանհամար՝ներառելով ցածր կորուստներ, մոդային դիսպերսիայի բացակայություն, բարձրմիակցում ազատ տարածության հետ և պատրաստման պարզություն՝ համեմատած այլ ալիքատարների:ՏՀց-ային իմպուլսների առանց աղավաղման ՀԶԹԱ-ում տարածման որինակ բերված է [62]-ում (նկ.1.1.7): Էտալոնային ազատ տարածության իմպուլսը ալիքատարում տարածվելովչի աղավաշվում:



Նկ. 1.1.7ՏՀց-ային իմպուլսի տարածման ժամանակային պատկերները ֆոտոնիկ բյուրեղյա մանրաթելում:

Ընդհանուր առմամբ, ՏՀց-ային իմպուլսի աղավաղում (սփռում ժամանակային տիրույթում) տեղի չունի այն ալիքատարներում, որոնք չունեն կրիտիկ հաճախություն, այսինքն՝ նրանցում հնարավոր է TEM մոդի ալիքների տարածում: TEM մոդի ազդանշանի արագությունները բնութագրվում են միայն դիէլեկտրիկով, որում տարածվում է ալիքը: Այդպիսի ալիքատարները ունեն երկկապ կառուցվածք: ՀՋԹԱ-ի շատ կարևոր հատկություններից մեկը այն է որ տեղի ունի էներգիայի միաչափ (1D) խտացում թիթեղների միջև:

1.2. Ավանդական հարթ զուգահեռ թիթեղներով ալիքատար

ՀԶԹԱ-ը բաղկացած է երկու հարթ զուգահեռ թիթեղներից որոնցում հնարավոր են TEM, TE և TM մոդերով ալիքների տարածումը նկ.1.2.1: Ընդհանուր առմամբՀԶԹԱ-ը պատկանում է այն ալիքատարների դասին (կոաքսիալ, երկլար հաղորդման գիծ), որոնք կարողանում էն աշխատելTEM մոդով և օժտված են այնպիսի բնութագրիչ հատկություններով, ինչպիսիք են լայնաշերտությունը ընդհուպ մինչև 0 հաճախությունը և խմբային արագության դիսպերսիայի (ԽԱԴ)բացակայությունը:

Քննարկվող դեպքում W ալիքատարի լայնությունը շատ ավելի մեծ է, քան թիթեղների միջև d հեռավորությունը, այսինքն դաշտըալիքատարի եզրերում և կախվածությունը լայնականx կոորդինատից անտեսվում են:Թիթեղների միջև տարածությունը լցված է ε դիէլեկտրիկ և μ մագնիսական թափանցելիությամբ նյութով: Ենթադրվում է, որ դաշտը ունի ժամանակային $e^{j\omega t}$ կախվածություն(ω-ն անկյունային հաճախությունն է)և տարածվում է կոորդինատական առանցքի z ուղղությամբ:Լայնական էլեկտրամագնիսական TEM ալիքները բնութագրվում են $E_z = H_z = 0$ պայմանով: TEM ալիքների լայնական դաշտերը համնկնում են ստատիկ դաշտերին որոնք կարող են գոյություն ունենալ երկու հաղորդալարերի միջև:



Նկ. 1.2.1Հարթ զուգահեռ թիթեղներով ալիքատար ի կառուցվածքը

Համարելով որ թիթեղներից մեկը 0 պոտենցիալ ունի իսկ մյուսը V_0 ապա դաշտի կոմպոնենտները որոշվում են

$$E_x = E_z = H_y = H_z = 0\ , \tag{1.2.1}$$

$$E_y = \frac{-V_0}{d} e^{j\beta z}, \tag{1.2.2}$$

$$H_x = \frac{-V_0}{\mu d} e^{j\beta z}, \tag{1.2.3}$$

$$\beta = k \tag{1.2.4}$$

$$k = \omega\sqrt{\varepsilon\mu} = 2\pi/\lambda \tag{1.2.5}$$

$$k_c = 0, \lambda_c = \infty \tag{1.2.6}$$

Որտեղ β-ն ալիքատարում տարածման հաստատունն է և համնկնում է ազատ տարածության տարածման հաստատունի հետ, k-ն ազատ տարածության տարածման հաստատուն, ω-ն և λ-ն համապատասխանաբար անկյունային հաճախություն և ալիքի երկարություն ազատ տարածությունում, k_c-ն և λ_c-ն համապատասխանաբար կրիտիկական տարածման հաստատուն և ալիքի երկարություն:

Էլեկտրամագնիսական TE ալիքները բնութագրվում են $E_z = 0$ և $H_z \neq 0$պայմանով և դաշտի կոմպոնենտները որոշվում են

$$E_y = E_z = H_x = 0 \tag{1.2.7}$$

$$E_x = \frac{j\omega\mu}{k_c} B_n \sin\frac{n\pi y}{d} e^{j\beta z} \tag{1.2.8}$$

$$H_y = \frac{j\beta}{k_c} B_n \sin\frac{n\pi y}{d} e^{j\beta z} \tag{1.2.9}$$

$$H_z = B_n \cos\frac{n\pi y}{d} e^{j\beta z} \tag{1.2.10}$$

$$\beta = \sqrt{k^2 - {k_c}^2} \tag{1.2.11}$$

$$k_c = \frac{n\pi}{d}, \lambda_c = \frac{2d}{n}, \lambda_g = \frac{2\pi}{\beta} \quad (1.2.12)$$

Որտեղ λ_g-ն ալիքի երկարությունն է ալիքատարում:



Նկ.1.2.2Էլեկտրամագնիսական դաշտի բաշխվածությունը XY կտրվածքում:
a-TEM, b-TM_1 և c-TE_1 մոդերի համար

Էլեկտրամագնիսական TM ալիքները բնութագրվում են $H_z = 0$ և $E_z \neq 0$պայմանով և դաշտի կոմպոնենտները որոշվում են

$$E_x = H_y = H_z = 0 \quad (1.2.13)$$

$$E_y = -\frac{j\beta}{k_c} A_n \cos\frac{n\pi y}{d} e^{j\beta z} \quad (1.2.14)$$

$$E_z = A_n \sin\frac{n\pi y}{d} e^{j\beta z} \quad (1.2.15)$$

$$H_x = \frac{j\omega\varepsilon}{k_c} A_n \cos\frac{n\pi y}{d} e^{j\beta z} \quad (1.2.16)$$

$$\beta = \sqrt{k^2 - {k_c}^2} \quad (1.2.17)$$

$$k_c = \frac{n\pi}{d}, \lambda_c = \frac{2d}{n}, \lambda_g = \frac{2\pi}{\beta} \quad (1.2.18)$$

Նկ. 1.2.2 բերված են դաշտերը TEM, TE_1 և TM_1 մոդերի համար:

Եթե ալիքատարում դիսպերսիվ նյութ չկա ապա V_Φփուլային և V_gխմբային արագությունները կախված են ալիքի երկարությունից և ներկայացվում են

$$V_\Phi = \frac{V}{\sqrt{1-\left(\frac{\lambda}{\lambda_c}\right)^2}} \quad (1.2.19)$$

$$V_g = V\sqrt{1-\left(\frac{\lambda}{\lambda_c}\right)^2} \quad (1.2.20)$$

$$V = \frac{1}{\sqrt{\varepsilon\mu}} \quad (1.2.21)$$

Լույսի արագությունը տվյալ միջավայրում արտահայտվում է $V = \sqrt{V_\Phi V_g}$: Երբ $\lambda = \lambda_c$ապա փուլային արագությունը անսահման մեծ է իսկ խմբային արագությունը 0: Երբ ալիքի երկարությունը փոքրանում է փուլային և խմբային արագությունները մոտենում են լույսի արագությանը ազատ տարածությունում:Նկ.1.2.3-ում բերված են (a) փուլային և (b) խմբային արագությունները $d = 2.2\text{մմ}$ համար: Հաճախության մեծացմանը հետ յուրաքանչյուր մոդի խմբային արագությունը մեծանում է մոտենալով V-ին:

Հաճախային կախվածությամբ մետաղական կորուստները TEM, TEև TM մոդերի համար արտահայտվում են

$$\alpha = \frac{1}{d}\cdot\frac{R_s}{\eta} TEM\text{մոդ} \quad (1.1.22)$$

$$\alpha = \frac{2}{d}\cdot\frac{R_s}{\eta}\cdot\frac{1}{\sqrt{1-\left(\frac{\lambda}{\lambda_c}\right)^2}} TM\text{մոդ} \quad (1.1.23)$$

$$\alpha = \frac{2}{d}\cdot\frac{R_s}{\eta}\cdot\frac{\left(\frac{\lambda}{\lambda_c}\right)^2}{\sqrt{1-\left(\frac{\lambda}{\lambda_c}\right)^2}} TE\text{մոդ} \quad (1.1.24)$$

որտեղ R_s-ը հաղորդիչի մակերևույթային դիմադրությունն $R_s = \sqrt{\omega\mu/2\sigma}$, σ-ն մետաղի հաղորդականությունը, $\eta = \sqrt{\mu/\varepsilon}$միջավայրի բնութագրիչ իմպեդանսն է:



Նկ.1.2.3Փուլային և խմբային արագությունները առաջին չորս մոդերի համար:
Կրիտիկ հաճախությունները նշված են սլաքներով: Յուրաքանչյուր մոդ
արտահայտված է համապատասխան գույնով:



Նկ.1.2.4Դաշտի կլանումը առաջին երեք մոդերի համար:
Կրիտիկ հաճախությունները նշված են սլաքներով: Յուրաքանչյուր մոդ
արտահայտված է համապատասխան գույնով:



Նկ.1.2.5TEM մոդայի դիֆրակցոն կորուստները վերջավոր լայնության ՀՁԹԱ-ում



Նկ.1.2.6TE_1 մոդայի դիֆրակցոն կորուստները բացակայությունը վերջավո լայնության ՀՁԹԱ-ում

Ինչպես երեվում է նկ.1.2.4-ից ՀՁԹ-ում TE1 մոդան զուրկ է դիֆրակցիոն կորուստներից այն պարզ պատճառով որ էլեկտրական դաշտի ուժագծերը ալիքատարի եզրերի մոտուղղված են իրար հակառակ որը և բերում է դեպի ազատ տարածությունն՝ բացակայության տարածման ճնշմանը:

1.3. TE մոդերը գոգավոր զուգահեռ թիթեղներով ալիքատարում

Դիտարկվող ալիքատարի կառուցվածքը և կոորդինատական համակարգը բերված է նկ.1.2.1-ում: Անվերջ երկար ալիքատարը լցված է համասեռ իզոտրոպ դիելեկտրիկով ε դիէլեկտրի թափանցելիությամբ: Ալիքատարի իդեալական հաղորդիչ պատերը ունեն R կորության շառավիղ, իսկ երկու թիթեղների միջև առավելագույն հեռավորությունը d_0. Ալիքատարը գրգռվում է y արանցքին զուգահեռ բևեռացմամբ հարթ ալիքով: Հարկավոր է գտնել TE մոդերը ալիքատարում:



Նկ.1.3.1. Երկու գոգավոր զուգահեռ թիթեղներով ալիքատարի կառուցվածքը:
R–կորության շառավիղ, ε–դիէլեկտրի թափանցելիություն,
d_0–թիթեղների միջև առավելագույն հեռավորությունը:

Վերին մակերևույթի կոորդինատները որոշվում են հետևյալ հավասարումով:

$$\left(x+R-\frac{d_0}{2}\right)^2+y^2=R^2 \tag{1.3.1}$$

Հետազոտվող դեպքում երբ

$$d_0 << R, \quad |y|<\sqrt{d_0 R}, \tag{1.3.2}$$

(1.3.1) հավասարումը ստանում է հետևյա

$$x=\frac{d_0}{2}-\frac{y^2}{2R}. \tag{1.3.3}$$

Նման ճանապարհով կարելի է ցույց տալ, որ ներքին մակերևույթը նկարագրվում է հետևյալ հավասարումով

$$x = -\frac{d_0}{2} + \frac{y^2}{2R}. \tag{1.3.4}$$

համաձայն (1.3.3) և (1.3.4) կամայական y-ի արժեքի դեպքում, հեռավորությունը մետաղական թիթեղների միջև հավասար է

$$d(y) = d_0 - \frac{y^2}{R}. \tag{1.3.5}$$

Ալիքային հավասարումը էլեկտրական դաշտի լարվածության E_y բաղադրիչի և TEմոդի համար ունի հետևյալ տեսքը

$$\frac{\partial^2 E_y}{\partial x^2} + \frac{\partial^2 E_y}{\partial y^2} + \frac{\partial^2 E_y}{\partial z^2} - \varepsilon(x,y)\frac{\partial^2 E_y}{\partial t^2} = 0, \tag{1.3.6}$$

Որտեղ $\varepsilon(x,y)$ մետաղական մակերևույթներով սահմանապակված տիրույթում հավասար է այն լցնող դիէլեկտրիկի ε թափանցելիությանը: Ադիաբատիկ մոտավորության սահմաններում, երբ ընկնող ալիքի երկարությունը շատ ավելի փոքր է մակերևույթների կորության շառավղից($\lambda << R$), (1.3.6) հավասարման լուծումը փնտրում ենք հետևյալ տեսքով

$$E_y = AY(y)X(x,y)e^{i(kz-\omega t)}. \tag{1.3.7}$$

Դիէլեկտրիկի $|x| < \frac{d(y)}{2}$ տիրույթում $X(x,y)$ ֆունկցիայի տեսքը կարելի է որոշել հարթ մետաղական ալիքատարների համար ստացված հայտնի բանաձևերից [15]:

$$X(x,y) = \begin{cases} \cos\frac{\pi m}{d(y)}x, & m = 1;3;5.... \\ \sin\frac{\pi m}{d(y)}x, & m = 2;4;6.... \end{cases} \tag{1.3.8}$$

Նկատենք, որ (1.3.8)–ում y կոորդինատը հանդես է գալիս որպես պարամետր: Այս դեպքում տեղադրելով (1.3.7) –ը (1.3.6) հավասարման մեջ կստանանք

$$\frac{d^2Y(y)}{dy^2}+\left(\varepsilon\frac{\omega^2}{c^2}-k^2-\frac{\pi^2m^2}{d^2(y)}\right)Y(y)=0,\quad m=1;2;3;... \tag{1.3.9}$$

Այս հավասարումը ստանալիս անտեսվում են $d(y)$–ի ածանցիալները, քանի որ մեր մոտարկման սահմաններում դրանք շատ փոքր են:

Ենթադրում ենք, որ ալիքատարային մոդը տեղակայված է

$$y^2 << \frac{Rd_0}{2} \tag{1.3.10}$$

Սահմաններում:

Այդ դեպքում

$$\frac{1}{d^2(y)}\approx\frac{1}{{d_0}^2}+\frac{2y^2}{R{d_0}^3}. \tag{1.3.11}$$

Տեղադրելով (1.3.11) –ը (1.3.9)-ում կստանանք

$$\frac{d^2Y(y)}{dy^2}+(\varepsilon\frac{\omega^2}{c^2}-k^2-\frac{\pi^2m^2}{{d_0}^2}-\frac{2y^2}{R{d_0}^3})Y(y)=0. \tag{1.3.12}$$

Կատարենք նշանակումներ:

$$\varepsilon\frac{\omega^2}{c^2}-k^2-\frac{\pi^2m^2}{{d_0}^2}=\beta,\quad \frac{2}{R{d_0}^3}=\gamma^4. \tag{1.3.13}$$

Այսպիսով (1.3.12) –ը կընդունի հետևյալ տեսքը

$$\frac{d^2Y(y)}{dy^2}+(\beta-\gamma^4y^2)Y(y)=0 \tag{1.3.14}$$

(1.3.14)–հավասարումը քվանտային մեխանիկայից լավ հայտնի հարմոնիկ օսցիլյատորի համար Շրեդինգերի հավասարման համանմանն է, որի լուծումը հետևյալ տեսքն ունի:

$$Y_n(y) = e^{-\frac{1}{2}(\gamma y)^2} H_n(\gamma y), \quad \beta = (2n+1)\gamma^2, \tag{1.3.15}$$

որտեղ $H^n(\gamma\, y)$– Էրմիտի պոլինոմն է

$$H_n(\gamma y) = (-1)^n e^{(\gamma y)^2} \frac{d^n}{d(\gamma y)^n} e^{-(\gamma y)^2}. \tag{1.3.16}$$

Ակնհայտ արտահայտություններ $n = 0, 1, 2$ Էրմիտի բազմանդամի համար ֆիզիկական որոշմամբ բերված են:

$$H_0(\gamma y) = 1, \qquad H_1(\gamma y) = 2\gamma y, \qquad H_2(\gamma y) = 4(\gamma y)^2 - 2. \tag{1.3.17}$$

(1.3.14)-ից ալիքային թվի համար ստանում ենք

$$k_{nm} = \sqrt{\varepsilon \frac{\omega^2}{c^2} - \frac{\pi^2 m^2}{d_0{}^2} - \frac{(2n+1)}{d_0{}^2}} \sqrt{\frac{2d_0}{R}}. \tag{1.3.18}$$

Նկ. 1.3.2–ում բերված են դիսպերսիոն կորերը հիմնական մոդայի համար տարբեր ԳԶԹԱ-ի տարբեր բարձրությունների դեպքում: Ինչպես երևում է (1.3.18)-ից, ԳԶԹԱ-ում դիսպերսիան ավելի մեծ է քան ԶԹԱ-ում [15] և (1.3.2) պայմանի պահպանման դեպքում նրան կարելի է անտեսել: Նկ. 1.3.3-ի (a և b)-ում բերված ենհզորության խտության բաշխվածությունը ԳԶԹԱ-իլայնական կտրվացքում TE_{01}և TE_{11}մոդերի համար (1.3.14) և (1.3.15)-ից ստացված: ԳԶԹԱ-ի հիանալի հատկությունը TE_{01}մոդի ալիքի սեխմումն է ալիքատարի, հիաշիվ որի ալիքատարը ձեռք է բերում Օհմական և դիֆրակցիոն կորուստներ որը լավ համապատասխանում էփորձնական արդյունքների հետ [12]: TE_{01} մոդի սեխմումը հատկապես կարեվոր է փոքր և բարակ նմուշների հետազոտման ՏՀց-ային սպեկտրոսկոպիայում: Նկ. 3-ից հետևում է որ բարձր մոդերի դեպքում դիտարկվում էհզորության խտության մեծացումը ԳԶԹԱ-ի բաց ծայրերում, որը բերում է, դիֆրակցիոն կորուստների մեծացմանը այսինքն բավականին երկար ալիքատարում

տեղի է ունենում ինքնասելեկցիա հիմնական TE_{01} մոդի: Նշենք որ արաջարկված մոտեցումը կիռառելի է նաևTM մոդերի համար:



Նկ.1.3.3. Հզորությանխտությանբաշխվածությունը ալիքատարի ապերտուրայում ($d_0 = 2.2, R = 20$), $TE_{01}(a)$ և $TE_{11}(b)$ մոդերի համար:



Նկ. 1.3.2. ԳՋԹԱ-ում $R = 20$, $m = 1, n = 0$ (k_{01})մոդայի համար տարածման հաստատունիk_0 տարածման հաստատունից տարբեր d_0հեռավորությունների համար:



Նկ.1.3.4. Հզորությանխտությանբաշխվածությունը ալիքատարի ապերտուրայում ($d_0 = 2, R = 20$), $TE_{01}(a)$ և $TE_{11}(b)$ մոդերի համար:

1.4. Քվազի-TEMմոդը հարթ զուգահեռ թիթեղներով ալիքատարում

Դիտարկենք ՁԹԱ-ի նկ. 1.1.1 մասնավոր դեպք երբ նրանում տարածվում են TEM և TM_1 երկու մոդերով ալիքներ կոորդինատական առանցքի z ուղղությամբ: Օգտվենք §1.1 ենթագլխում բերված էլեկտրամագնիսական ալիքների դաշտերի կոմպոնենտների արտահայտություններից TEM (1.1.1-1.1.3) և TM (1.1.13-1.1.16) մոդերի համար:
Դիտարկենք TEM մոդի համար էլեկտրական դաշտի լարվածության E_y

$$E_y{}^{TEM} = \frac{-V_0}{d} e^{j\beta z}, \qquad (1.4.1)$$

Որտեղ $\beta = k$ ալիքատարում տարածման հաստատունն է և համնկնում է ազատ տարածության տարածման հաստատունին $k = 2\pi/\lambda$, λ-ն ալիքի երկարություն ազատ տարածությունում և V_0-ն թիթեղներից մեկի պոտենցիալը մյուս թիթեղի 0 պոտենցիալի նկատմամբ:
Համարելով $-\frac{V_0}{d} = A_{TEM}$, TEM մոդայի E_y բաղադրիչի ամպլիտուդը կարող ենք գրել

$$E_y{}^{TEM} = A_{TEM} e^{jkz}, \qquad (1.4.2)$$

Դիտարկենք TM_1 մոդի ($n = 1$) համար էլեկտրական դաշտի լարվածության E_y

$$E_y{}^{TM} = -\frac{j\beta}{k_c} A_{TM} \cos\frac{\pi y}{d} e^{j\beta z} \qquad (1.4.3)$$

Որտեղ $\beta = \sqrt{k^2 - k_c{}^2}$ալիքատարում տարածման հաստատունն է, $k_c = \frac{n\pi}{d} = \frac{\pi}{d}$ կրիտիկ տարածման հաստատուն:
Գումարային դաշտը երկու մոդաների դեպքում կլինի

$$E_y{}^{qTEM} = E_y{}^{TEM} + E_y{}^{TM} = A_{TEM} e^{jkz} - \frac{j\beta}{k_c} A_{TM} \cos\frac{\pi y}{d} e^{j\beta z} \qquad (1.4.4)$$

$E_y{}^{TEM}$, $E_y{}^{TM}$ և $E_y{}^{qTEM}$ դաշտերի բաշխվածությունը YZ կտրվածքում բերված է նկ.1.2.1-ում:
Դիտարկենք TEM և TM մոդերը: Նկ.1..3-ում բերված է էլեկտրական դաշտիy կոմպոնենտի մագնիտուդներըTEM, TM_1 և TM_2 մոդերի համար: Մոդի պրոֆիլը ունի

$\cos(m\pi y/d)$տարածական կախվածություն, որտեղ $y = d/2$արտահայտում է ալիքատարի կենտրոնով անցնող առանցքը:



Նկ.1.4.1Էլեկտրական դաշտի y կոմպոնենտները TEM,ևTM_1 մոդերի համար:



Նկ.1.4.3. Էլեկտրական դաշտի լարվածության բաշխվածությունը YZ կտրվածքում a, c-E_y^{TEM}, b, d-E_y^{TM} և e-E_y^{qTEM}, $d = 2$, $A_{TM} = A_{TEM}/3$:



Նկ.1.4.4. Էլեկտրական դաշտի լարվածության $E_y{}^{qTEM}$ բաշխվածությունը YZ կտրվածքում Տարբեր A_{TM}-ի համար: a-$A_{TM} = A_{TEM}/5$, b-$A_{TM} = A_{TEM}$ և c-$A_{TM} = 5A_{TEM}$:

ԳԼՈՒԽ 2
ԹՎԱՅԻՆ ՄԵԹՈԴՈՎՔՎԱԶԻ-TEM ՄՈԴԻՀԵՏԱԶՈՏՈՒՄԸԳՈԳԱՎՈՐԶՈՒԳԱՀԵՌԹԻԹԵՂՆԵՐՈՎԱԼԻՔԱՏԱՐՈՒՄ

2.1. Վերջավորտարրերիմեթոդովմոդելավորումընրակիրառումըէլեկտրադինամիկականխնդիրներում

Այսօր թվային մեթոդները հանդիսանում են ֆիզիկայի բազում բնագավառների նոր բայց արդեն լավ օգտագործվող գործիքներից մեկը: 1970-ական թվականներին, երբ արդեն լայնորեն տարածում ունեին էլեկտրոնային հաշվիչ մեքենաները համակարգչային մոդելավորումը սկսեց արագորեն զարգանալ: 20 տարի անց 1990-ական թվականներին UNIX և PC համակարգիչները իրականություն դարձրեցին կոմերցիոն դաշտի-հաշվիչները (field-solvers): Համակարգիչների ծնունդը հիմնովին փոխեց մեր հնարավորությունը Մաքսվելի հավասարումների լուծման: Անալիտիկ լուծումներ հայտնի են շատ սահմանափակ քանակությամբ դեպքերի համար որոնք դժվար են առանց վորոշակի մոտավորությունների կիրառվում իրական աշխարհում: Թվային մեթոդները հնարավորություն են տալիս ավելի արագ և էժան նախագծման գործընթաց որում թանկ ու ժամանակատար նախատիպերի օգտաքործումը նվազագույնի է հասցված: Այս գործիքներըկարող են տրամադրել նաև վճռորոշ տեղեկատվություն և հասկացողություն սարքի էլեկտրամագնիսական աշխատանքի վերաբերյալ, որը կարող է չափազանց դժվար կամ անհնար լինել փորձերի կամ վերլուծական հաշվարկների միջոցով: Հաշվարկների ավտոմատացումը թույլ է տալիս լայնածավալ պարամետրական ուսումնասիրությունների: Համեմատաբար վերջերս էլեկտրամագնիսական նախագծման խնդիրների օպտիմալացում հաշվարկների օգնությամբ օգտագործվում են: Այսօր նախագծումը կարելի է կատարել արագ և ավելի էժան թվային հաշվարկների միջոցով: Թվային հաշվարկները դարձել են հիմնական նախագծման գործիքները, ինչպես արտադրական, այնպես էլ գիտականհետազոտություններում: ԳԲՀ և ՏՀց-ային տիրույտում թվային հաշվարկները առավել վերջերս են կիրառվում, բայց այժմ լայնորեն օգտագործվում են: Էլեկտրամագնիսական համատեղելիության պահանջարկի ավելացումըսպառնում է

նոր համակարգչային խնդիրների իհայտ գալուն: Այդպիսի գործիքների կատարելականությունը աճումէ շատ արագ: Մի պատճառը դա Համակարգչային հզորության կայուն աճն է ավելի քան կես դարում: Եվս մեկ հավասար կարևոր պատճառն ալգորիթմերիբարելավումներն են: հիմնական մեթոդներն են

- **Վերջավոր Տարբերությունների Մեթոդ (ՎՏՄ) (Finite Differences Method FDM) սովորաբար ժամանակային տիրույթի հաշվարկներում:**
- **Վերջավոր Տարրերի Մեթոդ (ՎԷՄ) (Finite Element Method FEM):**
- **Եզրային Էլեմենտների Մեթոդ (ԵԷՄ) (Boundary Element Method BEM) որը պատմական պատճառներով սովորաբար վերագրում են Մոմենտների Մեթոդին (Method of Moments (MoM):**

Այս աշխատանքի բոլոր հաշվարկները իրականացվել են Ansoft HFSS v11 կոմերցիոն ծրագրային փաթեթի օգնությամբ: Այս ծրագրային փաթեթի հիմքում ընկած է ՎԷՄ-ը: ՎԷՄ-ըամբողջ խնդրի տարածությունը բաժանում հազարավոր փոքր ենթամասերի նկ.2.1.1 նդաշտը ներկայացնում է յուրաքանչյուր ենթամասում (էլեմենտում, տարրում) լոկալ ֆունկցիայով և ընդհանուր դեպքում Մաքսվելի հավասարումները վերածվում են գծային հավասարումների համակարգի: ՎԷՄ-ի ամենա ուժեղ կողմը և հիմնական պատճառը, թե ինչու է այս մեթոդընախնտրելի բազմաթիվ ինժեներական ճյուղերում, դա նրա բարդ երկրաչափությամբ խնդիրների լուծման կարողությունն է: Որպես կանոն, սա արվում է չստրուկտուրացված ցանցերի օգտագործմամբ: Այդ ցանցերը կարող են բաղկացած լինել երկչափ խնդիրներում եռանկյուններից նեռանկյուն հիմքով բուրգերից (tetrahedra) եռաչափ խնդիրներում: Չստրուկտուրացված ցանցերը օրինակեռանկյուն հիմքով բուրգերից կազմված թույլ են տալիս լավ արտահայտում կոր օբյեկտների, որոնք դժվար են ներկայացվումկարտեզյան ցանցերում որոնք օգտագործվում են ՎՏՄ-ում: Ավելին, չստրուկտուրացված ցանցերը թույլ են տալիս բարձրճշտություն ստրուկտուրայի այն տեղերում վորտեց լուծումները արաք են փոփոխվում: ՎԷՄ-ի ևս մեկ գեղեցիկ հատկությունը այն է, որ այս մեթոդը ապահովում է փնտրվող ֆունկցիայի լավ սահմանված ներկայացումամբողջ լուծման տիրույթում: Դա հնարավորություն է տալիս կիրառել բազմաթիվ մաթեմատիկական գործիքներն ապացուցել կարևոր հատկություններ կայունության եւ զուգամիտության վերաբերյալ: ՎԷՄ-ի

թերությունըհամեմատած այն ՎՏՄ-ի հետ այն է, որ հստակ ֆորմուլաներանցնելու ժամանակային-տիրույթի դաշտերի վերարտադրումը չի կարող ստացվել ընդհանուր դեպքում:



Նկ. 2.1.1 ՎԷՄ-ի ընդհանուրկառուցվածքը

Լուծման ճշտությանը կախված է յուրաքանչյուր առանձին տարրերի չափերից համեմատած տվյալ խնդրում ալիքի երկարությունիը: Բայց ինչքան տարրերը շատ այնքան էլ գծային հավասարումների համակարգն մեծ և նրա լուծման համար համակարգչային հաշվողական ռեսուրսներ են պետք: Պարզ է, որ ՏՀՑ-ային տիրույթում ի հաշիվ ալիքի երկարության փոքր լինելուն համեմատած դիտարկվող օբյեկտի հետ առաջ է բերում լուրջ խնդիրների կապված նշված հաշվողական ռեսուրսների հետ: Այս աշխատանքում մոդելավորած ալիքատարային համակարգերի էլեմենտների թիվը հասնում է 4մլն-ի վորը անհնարին կլիներ լուծել առանց ՌՖԷԻ-ում գործող HPC կլաստերի օգնության: HPC կլաստերը իրենից ներկայագնում է 6 սերվերների համակարգ միացված իրար որոնցից յուրաքանչյուրի պարամետրերն են Intel Xeon CPU E5420 2.50GHz 2 Processor (Quad-Core) 8GB RAM: Ansoft HFSS v11 ծրագրային փաթեթի ընտրությունը հիմնականում կապված է նրա այն հատկության հետ վոր մոդելը կարողանում է բաժանել ավելի փոքր ենթամոդելների և ամեն մի ենթամոդել լուծել առանձին առանձին տարբեր հաշվողական մեքենաներով (հաշվողական մեքենա կարող է հանդիսանալ թե լրիվ ֆիզիկապես առանձին համակարգիչ և թե նույն համակարգչի առանձին պրոցեսորը):

2.2. Քվազի-TEMմոդիալիքիգրգռմանՎՏՄսիմուլացիանզուգահեռնգոգավորզուգահեռթիթեղներովալիքատարներում

Վերջին տարիներին ԶԹԱ-ում և ԳԶԹԱ-ում լայնաշերտ ՏՀց-ային իմպուլսների տարածման բազմաթիվ հետազոտություններ են եղելTEM [1-4], և TE_1 [5, 6] մոդերով: TEM մոդը ԶԹԱ-ում և ԳԶԹԱ-ում թույլ է տալիս առանց աղավաղման լայնաշերտ ՏՀց-ային իմպուլսների տարածումը, քանի, որ այն չունի կրիտիկ հաճախություն և հետևաբար չունի խմբային արագության դիսպերսիա. Բայց երկար տարածման հեռավորությունների դեպքում շնորհիվ տարածվող ալիքի դիֆրակցիայի գոյություն ունի բաղիացիոն կորուստ (ՌԿ) այսինքն էներգիայի արտահոսք ԶԹԱ-ում և ԳԶԹԱ-ում առկա բաց կողային եզրերից: Իտարբերություն TEM մոդիTE_1 մոդի համար պայմանավորված այդ մոդի լավ էներգետիկ լոկալիզացիայի հատկության (ՌԿ) թույլ են, բայց այս մոդումառկա է ևս մեկ խնդիր՝կապված կրիտիկ հաճախություն մոտ $f_c = c/2H$բարձր խմբային արագության դիսպերսիայով (ԽԱԴ), որտեղ H-ը թիթեղների միջև հեռավորությունն է: Իհարկե նշված աշխատանքներում ԽԱԴ-ն նվազեցնելու նպատակով առաջարկվում է H-ը մեծացնել բայց թիթեղների միջև հեռավորության մեծացումը բերում է ՌԿ-ի մեծացմանը: Այս աշխատանքում առաջարկված է նոր շղթայակցման տեխնիկական եղանակ ԶԹԱ-ի և ԳԶԹԱ-ի համար և $qTEM$ մոդով էլեկտրամագնիսական ալիքների տարածումը որը հանդիսանում էTEM, և TM_1 մոդերի վերադրում: Առավելությունը առաջարկվող շղթայակցման այն է, որ նա հնարավորություն է տալիս խուսափել, սիլիկոնային ոսպնյակների օգտագործումից շնորհիվ համեմատաբար խոշոր մուտքայինապերտուրայի: ԶԹԱ-ում և ԳԶԹԱ-ում քվազի-TEMալիքների գրգռման մեթոդի հիմքում ընկած է այն, որ ընկնողալիքը պետք է բևեռացված լինի ոչ թե հենց X առանցքի երկայնքով, որը պահանջվում է TEM մոդի գրգռման համար, այլ անկյան տակ, այսինքն տարածման ուղղությունը ($\boldsymbol{K}$-ալիքային վեկտոր) և Z առանցքը կազմեն θ անկյուն: Դիտարկվող ԳԶԹԱ-ի և ԶԹԱ-ի կառուցվածքները և կոորդինատական համակարքը բերված են նկ.2.2.1-ում: Այստեղ ԶԹԱ-ի տարբերությունը քնարկված ԶԹԱ-ից կայանում է լայնությունը որը իտարբերություն նախորդի շատ մեծ չէ համեմատած թիթեղների միջև հեռավորությանը նկ.2.2.1-a, b թիթեղների միջև հեռավորությունը H_pև լայնությունը W: ԳԶԹԱ-ը իրենից

ներկայացնում է երկու իրար զուգահեռ թիթեղներից բաղկացած համակարգ վորի թիթեղների ներքին մակերևույթը գոգավոր է և ունեն R կորության շառավիղ, թիթեղների կորության գագաթների միջև հեռավորությունը H, եզրերի հեռավորությունը D, լայնությունը Wնկ.2.2.1-c, d:

Շղթայակցումը մեծացնելու և բարձր կարգի TM մոդերի առաջացումը նվազագույնի հասցնելու համար թիթեղներից մեկը ունի կորաձև բացվածքնկ.2.2.1-e: քվազի-TEMալիքների էլեկտրական դաշտի բաշխվածությունը ուսումնասիրելու համար ԶԹԱ-ում և ԳԶԹԱ-ումմենք օգտագործում ենք թվային մեթոդների հիման վրա վերջավոր տարր մեթոդը ապա ստացված արդյունքները համեմատել ենք§1.2-ում նշված TEM և TM_1 մոդերի գումար մոդայի քվազի-TEMհետ: Քվազի-TEM մոդայի համար ունենք

$$E_x{}^{qTEM} = E_x{}^{TEM} + E_x{}^{TM} = A_{TEM}e^{jkz} - \frac{j\beta}{k_c}A_{TM}\cos\frac{\pi x}{H}e^{j\beta z} \quad (2.2.1)$$

որտեղ

$$k = 2\pi/\lambda,(2.2.2)$$

ազատ տարածության տարածման հաստատունն է,

$$\beta = \sqrt{k^2 - k_c{}^2} \quad (2.2.3)$$

ալիքատարում TM_1 մոդի տարածման հաստատունն է,

$$k_c = \frac{n\pi}{H} = \frac{\pi}{H}(2.2.4)$$

կրիտիկ տարածման հաստատունը:

քվազի-TEMմոդում հիմնական մոդը TEMմոդն է շնորհիվ $A_{TEM} >> A_{TM}$, որը կապված է θ-ի հետ բայց TM_1 մոդի ներդրումը չնայած այն բանի, որ պոքր է տալիս ազդեցություն, որ պահվածքը նորքվազի-TEMմոդի ալիքի նման է TEM ալիքինանդրադառցող ներքևի և վերևի թիթեղիկներից:



Նկ. 2.2.1ԳԶԹԱ-ի և ԶԹԱ-ի կառուցվածքըa եռաչափ, bXZկտրվածքը, cXY կտրվածքը:

Այսպիսով քվազի-TEMմոդի գրգռումը և տարածումը ՎՏՄ-ով մոդելավորվել է ԳԶԹԱ-ում որի երկրաչափական պարամետրերն են՝D = 1մմ, H = 2.2մմ, W = 10մմ, R = 12մմ: Հաշիվառնելով, որ ԶԹԱ-ն և ԳԶԹԱ-ն կառուցվացքով նման են և այն, որ հետաքրքրություն է ներկայացնում հիմնականում ԳԶԹԱ-ն այստեղ դիտարկվել է միայն ԳԶԹԱ-ն: Մոդելավորման մեջ ալիքատարի մուտքային հատվածում տեղադրված է էլեկտրամագնիսական ալիքների Գաուսյան փնջի աղբյուր Նկ. 2.2.2 որի **K** ալիքային վեկտորը (տարածման ուղղությունը) և $\boldsymbol{E}$ էլեկտրական դաշտի լարվածության վեկտորը ունեն Նկ. 2.2.1-ի (e)-ում պատկերված ձևը:Գաուսյան փունջի տրամագիծը ֆոկուսում3մմէ, ֆոկուսը գտնվում է կոորդինատական համակարգիսկզբնակետում:



Նկ. 2.2.2 Էլեկտրամագնիսական ալիքների Գաուսյան փնջի աղբյուրի տեսքը լայնական և երկայնական կտրվացքներում:

Նախ դիտարկենք ԳԶԹԱ-ի վարքը տարբեր հաճախությունների դեպխում: Նկ. 2.2.3-ում պատկերված ենԷլեկտրականդաշտիլարվածությանբաշխվածությունները ալիքատարի երկայնական YZ կտրվածքում a: 300 և b: 400ԳՀցհաճախություններիհամար: Ինչպես երեվում է նկարից սիմուլյացիայի և անալիտիկ արտահայտությունից ստացված դաշտերը համնկնում են: Այստեղ հաճախության մեծացման հետ դաշտի խտացումների և նոսրացումների քանակը պակասում է որը բացատրվում է երկու TEM (2.2.2) և TM_1 (2.2.3) մոդերի տարածման հաստատուններիտարբերությամբ: Մոտենալով TM_1 կրիտիկ հաճախությանը այդ տարբերությունը մեծանում է և այդ պատճառով երկու ալիքների տարածման TM_1 մոդի էլեկտրական լարվածության վեկտորի X բաղադրիչը համապատասխան ճանապարհ անցնելուց հետո պոխում է իր ուղղությունը TEM մոդի էլեկտրական լարվածության վեկտորի X բաղադրիչի նկատմամբ և ստացվում է, որ գումար ալիքը էլեկտրական լարվածության վեկտորի X բաղադրիչի բաշխվածությունը նմանվում է հարթ ալիքի դաշտի բաշխվածությանը որը տարածվում է ալիքատարում անդրադառնալով վերևի և ներքևի պատերից:Նկ. 2.2.4-ում պատկերված են Էլեկտրական դաշտի լարվածության բաշխվածությունըYZ կտրվածքում գոգրման երկու

տարբեր անկյունների համար: Նկարից պարզ է, որ տարածվող TEM և TM_1 մոդերի ամպլիտուդները կախված են անկման անկյունից: Ինչպես երևում է θ-ի մեծացումը բերում է TM_1 մոդի ամպլիտուդի մեծացմանը որից առաաջանում է խնդիր կապված ալիքատարի և նրանում դիսպերսիայի և կորուստների վերաբերյալ:



Նկ. 2.2.3ԳԶԹԱ-ում էլեկտրական դաշտի լարվածությանբաշխվածությունը
YZկտրվածքումa:300 հաճախության համար

2.3. ԶուգահեռնգոգավորզուգահեռթիթեղներովալիքատարներումդիֆրակցիոնկորուստներիՎՏՄսիմուլացիան

ՏՀց-ԺՏՍ զարգացումը բերեց այնպիսի ալիքատարների կիրառմանը, որոնցով անցնելիս լայնաշերտ ՏՀց-ային իմպուլսը (100 ԳՀց-ից մինչև 10 ՏՀց) հնարավորինս չաղավաղվի: Աղավաղումները առաջանում են խմբային արագության դիսպերսիայի (ԽԱԴ) հետևանքով: Ընդհանուր առմամբ, ՏՀց-ային իմպուլսի աղավաղում (սփռում ժամանակային տիրույթում) տեղի չունի այն ալիքատարներում, որոնք չունեն կրիտիկ հաճախություն, այսինքն՝ նրանցում հնարավոր է TEM մոդի ալիքների տարածում: Այդպիսի ալիքատարների տիպերն են՝ ԶԹԱ, երկլար, կոաքսիալ: TEM մոդի ազդանշանի արագությունները բնութագրվում են միայն դիէլեկտրիկով, որում տարածվում է ալիքը:Չնայած բոլոր այսալիքատարները ունեն իրենց առավելությունները, ԶԹԱ-ը հանդիսանում է ամենալավ պվ-ին ՏՀց-ային իմպուլսների ալիքատարը՝ ներառելով ցածր մետաղական կորուստներ, մոդային դիսպերսիայի բացակայություն, բարձր միակցում (coupling) ազատ տարածության հետ և պատրաստման պարզություն՝ համեմատած այլ ալիքատարների հետ: ԶԹԱ-ի այսպիսի լավ հատկությունների հետ գոյություն ունի շատ կարեվոր մի խնդիր կապված բաղիացիոն կորուստների հետ ԶԹԱ-ումառկա բաց կողային եզրերից: Ուսումնասիրենք նոր քվազի-TEMմոդի ալիքների ՌԿ-ը ԳԶԹԱ-ում: Նկ. 2.3.1-ում բերված են մոդելավորման արդյունքները ԳԶԹԱ-ի Դիֆրակցիոն կորուստները $F = 200, 300, 400$ և 500ԳՀց հաճախությունների, ֆիքսված R-ի և D ալիքատարի երկրաչափական պարամետրերի դէպքում



Նկ. 2.3.1ԳՋԹԱ-ի Դիֆրակցիոն կորուստները $F = 200, 300, 400$ և ԳՀg հաճախությունների, ֆիքսված R-ի և D ալիքատարի երկրաչափական պարամետրերի դեպքում:



Նկ. 2.3.4ԳԶԹԱ-ի Դիֆրակցիոն կորուստները $F = 300$ԳՀց հաճախությունների, ֆիքսված R-ի և D ալիքատարի երկրաչափական պարամետրերի դեպքում անկյունների համար:



Նկ. 2.3.5ԳԶԹԱ-ի Դիֆրակցիոն կորուստները $F = 300$ԳՀց հաճախությունների, ֆիքսված R-ի և D դեպքումTE CPPWG, TEM CPPWG,TEM PPWG, qTEMPPWG և qTEM CPPWG:

2.4. ԶուգահեռնգոգավորզուգահեռթիթեղներովալիքատարներիկայունությանՎՏՄսիմուլացիանմեխանիկականդեֆորմացիաներինկատմամբ

Ուսումնասիրենք ԳԶԹԱ-ի և ԶԹԱ-ի ՌԿ-ը տարբեր մեխանիկական դեֆորմացիաների առկայության դեպքում: Դիտարկենք երկու տիպի դեֆորմացիաներ որոնք են երկու թիթեղների զուգահեռության լայնական խաղտումը Նկ. 2.4.1-(a, b) և ալիքատարների երկայնական պտույտը Նկ. 2.4.1-(c):



Նկ. 2.4.1ԳԶԹԱ-ի և ԶԹԱ-ի մեխանիկական դեֆորմացիաները



Նկ. 2.4.2ՌԿ-ըԳԶԹԱ-ի և ԶԹԱ-ի մեխանիկական դեֆորմացիաների դեպքում



Նկ. 2.4.3 ՌԿ-ըԳԶԹԱ-ի և ԶԹԱ-ի մեխանիկական դեֆորմացիաների դեպքում



Նկ. 2.4.4ՌԿ-ըԳԶԹԱ-ի և ԶԹԱ-ի մեխանիկական դեֆորմացիաների դեպքում

ԳԼՈՒԽ 3
ՓՈՐՁՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մի շարք փորձարարականև պատրաստման տեխնիկան հնարքներէին անհրաժեշտ այս աշխատանքում նկարագրված փորձերիիրականացման համար: Քանի, որ բոլոր փորձարարական աշխատանքներըիրականացվել ենՏՀց-ԺՏՍ համակարգով, որը մանրամասնորեննկարագրված և ուսումնասիրված է մի շարք աշխատանքներում, այստեղ համեմատաբար կարճ նկարագրություն կտրվի: Այս գլխի մնացած մասը մանրամասնորեննկարագրում է ալիքատարների, տեխնիկական հարմարանքների և նրանցով կատարված փորձերի նկարագրությունը ինչպես նաև այդ փորձերում ստացված արդյունքների մշակումը և քննարկումը:

3.1. Տերահերցայինտիրույթիժամանակային-սպեկտրոսկոպիայիփորձարարականսարքավորումը

ՏՀց-ԺՏՍ համակարգըհայտնիէորպես ՏՀց-ային հաճախություններիսպեկտրոսկոպիայում վերլուծության ստանդարտ փորձարարականհամակարգ: Փորձարարական համակարգիտիպիկ բլոկ սխեման բերված է Նկ.3.1.1-ում: ՏՀց-ային իմպուլսները ճառագայթման աղբյուր է հանդիսանում InAsէմիտերի մակերևույթը (Tx), որը լուսավորվում էֆվ-ային լազերի փնջով: Այստեղ, որպես օպտիկական ճառագայթման աղբյուր ծառայում է Mai-Tai Spectra@Physics ֆեմտովայրկյանային լազերը, որը առաքում է ≈3մմ տրամագծովփունջ, ≈ 80ֆվ տևողությամբ, 12նվ (80ՄՀց) կրկնման պարբերությամբ և 1.8Վտ միջին հզորությամբ իմպուլսներ:Այդպիսի գեր կարճ լազերային իմպուլսներիցգեներացված ՏՀց-ային իմպուլսների սպեկտրը ընկած է հաճախությունների 0.1 մինչև 4 ՏՀց տիրույթում: Ազատ տարածություն ճառագայթված ՏՀց-ային փունջը կարելի է մոտարկել որպես Գաուսյան փունջ: Ճառագայթված ՏՀց-ային իմպուլսները կոլլիմացվում են երկու պարաբոլական հայլիներով ապա անցնելով սիլիցիումային ոսպնյակով ֆոկուսացվում են սիմետրիկ դիպոլային անտենայի (Rx) վրա (≈45մկմ չափսերով), որը տեղակայված է ցածր ջերմաստիճաններում աճեցված (≈400C) GaAs-ի բարակ շերտի հակառակմակերևույթին:ՏՀց-

այինինպուլսիազդեցությամբանտենայիծայրերումսռեոծվումէպոտենցիալներիտարբեր ություն: Սակայնանտենայումհոսանքիհայտկգամիայնայնդեպքում, երբանտենանմիաժամանակճառագայթվինանօպտիկականիմպուլսով՝ կիսահաղորդչայինշերտումառաջացնելովազատլիցքակիրներ:Այդպիսով, փոխելով ֆեմտովայրկյանային օպտիկական իմպուլսի անտենայի վրա ընկնելու պահը (շարժական հայելիներով օպտիկական հապաղման գծի միջոցով), կարելի է չափել ՏՀց-ային իմպուլսի դաշտիականթարթային արժեքների փոփոխությունը և դրանով իսկ որոշել իմպուլսի ժամանակային տեսքը: Ցածր ջերմաստիճաններում աճեցված GaAs-ում ազատ լիցքակիրների կյանքի կարճ տևողությունը (≈0.3պվ) թույլ է տալիս մեծ լուծողականությամբ չափել ՏՀց իմպուլսի տեսքը: Ազդանշան-աղմուկ հարաբերության մեծացման համար մեխանիկական ընդհատիչի միջոցով կատարվում է լազերային ճառագայթման ցածր հաճախայինմոդուլում (≈ 1կՀց հաճախությամբ), որը հնարավորություն է տալիս անտենայի հոսանքի չափումն իրականացնել է սինքրոն դետեկտման ռեժիմում (ժամանակի ≈ 300մվ հաստատունով):Իմպուլսի ժամանակային տեսքը գրանցելուց հետո իրականացվում է E(t)ժամանակային կախվածությա թվային Ֆուրիե ձևափոխություն: Սովորաբար այս համակարգը օգտագործվումէ սպեկտրոսկոպիայում ներառելով ինֆորմացիա հետազոտվող նմուշի թէ իմպուլսի ժամանակային ինֆորմացիան և թէ Ֆուրիե ձևափոխության սպեկտրի ինֆորմացիան:Բոլոր չափումներըկատարվում են համեմատած հենակային իմպուլսի՝ այսինքն նմուշի բացակայության դեպքում իմպուլսի հետ (reference): Այս աշխատանքումորպես համեմատության ՏՀց-այինիմպուլս (հետազոտվող ալիքատարային կամ նմուշների բացակայության դեպքում) ընտրված է ազատ տարածությունում տարածվող իմպուլսը:Տիպիկազատտարածության իմպուլսի ժամանակային տեսքը և սպեկտրըբերված են Նկ.3.1.2-ում:



Նկ.3.1.1ՏՀց-այինՓորձնական սարքավորման բլոկ սխեման



Նկ.3.1.2 ՏՀց-ային իմպուլսիժամանակային տեսքը և սպեկտրը

3.2. ՏՀց-ային իմպուլսի տարածումը գոգավոր զուգահեռ թիթեղներով ալիքատարներում, քվազի-TEM և TE մոդերով

ԳԶԹԱ-ի վարքը ՏՀց-ային հաճախությունների տիրույթում կատարված փորձնական հետազոտություններըբաղկացած է չորս փուլից:

Առաջին փուլում ՏՀց-ային իմպուլսը անցնում է ազատ տարածությունով՝ ուղղորդվելով միայն երկու պարաբոլական հայելիներով (նկ.3.1.1): Այս համակարգը, շնորհիվ ճառագայթված փնջի պարաբոլական հայելիներով ուղղորդման և ֆոկուսացմանհատկության,ապահովում է ՏՀց-ային իմպուլսի տարածումը՝առանց աղավաղումների և կորուստների: Այսպիսով՝ հետագա չափումների համար այն հանդիսանում է որպեսՏՀց-յին իմպուլսի հենակային բնութագիրինչպես ամպլիտուդա-ժամանակային, այնպես և սպեկտրալ տիրույթի: Այդ հենակային իմպուլսիբնութագիրըպատկերված է(Նկ.3.1.2):

